«ԼՐԱԲԵՐԻ» 40 ՏԱՐԻՆ

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

1940 թվականի նոյեմբերին լույս տեսավ առաջին հայերեն ակադեմիական պարբերականը՝ «Տեղեկագիր» (1966 թվականից՝ «Լրաբեր հասարակական գիտությունների») ամսագիրը (1—2 միացյալ համարով)։ Ամսագիրը սկսեց հրատարակվել ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի նախագահության՝ նույն թվականին ընդունած համապատասխան որոշման համաձայն։

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանն իրավացիորեն շեշտել է, որ գիտական պարբերականը գիտության զարգացման առաջնահերթ պայմաններից մեկն է։ Եվ հիրավի, ինչպես որ առանց մտքերի փոխանակման և բախման չի կարելի պատկերացնել գիտության վերընթաց զարգացում, այնպես էլ այդ բախումն ու փոխանակումը անհրաժեշտ են առանց գիտական պարբերական մամուլի գոյության։ Սովետական Հայաստանում գիտության 20-ամյա զարգացման թելադրանքով էր հենց պայմանավորված «Տեղեկագրի» երևան գալը։

«Տեղեկագրի» սկզբնական պրոֆիլը, որն ընդգրկում էր հասարակական և բնական գիտությունները միատեղ, պահպանվեց մինչև 1943 թվականը։ Պատերազմի այդ ծանր տարում հնարավոր դարձավ Հայկական մասնաճյուղի պարբերականը հրատարակել երկու (I և II) սերիայով՝ հասարակական և բնական գիտություններ. դա, անշուշտ, մի անգամ ևս վկայում էր գիտության զարգացման նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ցուցաբերած ջերմ հոգատարության մասին։ Այդ հոգատարության վառ դրսևորումներից մեկն էլ նույն տարում ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի բազայի վրա ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումն էր, որով էլ ավելի լայն հորիզոններ բացվեցին գիտության զարգացման առաջ մեր հանրապետությունում։ Այդ նոր էտապը վերաբերում էր նաև պարբերական հրատարակություններին, որոնք գիտությունների ակադեմիայի և նրա ինստիտուտների գործունեության ծավալմանը զուգահեռ տարեցտարի գնալով հասակ էին առնում և բազմապատկվում։ Բավական է նշել, որ այժմ ՀՍՍՀ ԳԱ-ն հրատարակում է 13 անուն պարբերական, համոզմանք, որը մեր հանրապետությունում գիտության առաջընթացի անուրանալի վկայություններից է։

«Լրաբերի» կտրած ուղին մի հայտնի չափով Սովետական Հայաստանում վերջին 40 տարիներին հասարակական գիտությունների և մանավանդ հայագիտության նվաճումների արտացոլումն է և առհավատչյան այն բանի, որ ամսագիրը առաջատար մասնակցություն է ունեցել հասարակական գիտությունների և հասարակական-քաղաքական կյանքի զարգացմանը։ Պատմության, լեզվի, գրականության, բանասիրության, հնագիտության և գիտության այլ բնագավառների մի շարք նոր դրույթներ, կնճռոտ պրոբլեմներ և վիճա-

հարույց շատ ու շատ հարցեր առաջին անգամ բարձրացվել, քննարկվել և լուսաբանվել են «Լրաբերի» էջերում։ Դա հոմանիտար գիտությունների զարգացմանը ամսագրի մատուցած նշանակալի ծառայություններից է, որը, հարկավ, պետք է շեշտել մասնավորապես։

Որպես առաջնեկ՝ «Տեղեկագիրը» («Լրաբերը») մեզանում տարի առ տարի և համար առ համար մշակել և գործածության մեջ է դրել գիտական հարցերը գրավոր խոսքով ներկայացնելու շատ սկզբունքներ, դրա համար շարունակ օրինակ ունենալով միութենական գիտական պատկառազդու հանդեսների լավագույն փորձը։ Միաժամանակ, հանրապետության հասարակական կյանքի և սոցիալիստական հուժկու շինարարության բնագավառում իր բարձր ու պատասխանատու դերի գիտակցումով, ամսագիրը ջանացել է միշտ մնալ կյանքի առաջընթացի դիրքերում և այդ դիրքերից իր մասնակցությունն է ցուցաբերել գիտական հարցերի մշակմանն ու լուսաբանմանը՝ շարունակ նպատակակետ ունենալով մեր նորոգ կյանքի արդիական խնդիրներն ու պահանջները։

Լինելով ամենամսյա գիտական պարբերական, «Լրաբերը» իր ստեղծման առաջին իսկ օրից որդեգրել է հրատարակչական մի գովելի պրակտիկա, որը այնուհետև ամսագրի գոյության երկար ու ձիգ տարիների ընթացքում զարգացել ու դարձել է մշտական սկզբունք։ Նրա էջերում լայն տեղ են գտնում չէ թե միայն ակադեմիայի ինստիտուտներում կատարվող ուսումնասիրությունները. հանրապետության բուհերի դասախոսները, ավելին՝ Միության և արտասահմանյան նշանավոր շատ գիտնականներ ևս հնարավորություն են ունեցել հանդես գալու նրա էջերում։ Դա շատ կարևոր պրակտիկա է, որովհետև այն հնարավորություն է ընձեռում հարցերի ավելի լայն ու համակողմանի քննարկման, մտքերի ազատ բախման համար, որն այնքան կարևոր է գիտական ճշմարտության բացահայտման գործում։

«Լրաբերում» մարքս-լենինյան տեսության հիման վրա լուսաբանվում են հասարակական գիտությունների պրոբլեմները, սոցիալիստական հասարակարգի զարգացման օրինաչափությունների և կոմունիստական շինարարության հարցերը։ Աչքի ընկնող տեղ են բռնում մարքս-լենինյան տեսության և պատմահեղափոխական թեմաները, ժողովուրդների ինտերնացիոնալ դաստիարակության և բուրժուական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարի խնդիրները։ Ամսագիրը, որպես առաջնահերթ խնդիր, առանձնահատուկ տեղ է տալիս կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության լուսաբանմանն ու պրոպագանդմանը։ Հրապարակված նյութերի մի ծանրակշիռ մասը կազմում են հայ մշակույթի և առանձնապես հայագիտության հարցերը՝ բառիս լայն իմաստով։ Թեմատիկ մեծ ընդգրկում ներկայացնող բոլոր այս խնդիրներն ամսագիրն իր ընթերցողներին է մատուցում առանձին բաժիններով՝ տպագրվող նյութերի գիտական և քաղաքական ընդգրկմանը համապատասխան։ Այդ բաժիններն են՝ հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ, քննադատություն և մատենախոսություն, բանավեճեր, քննարկումներ, գիտական լրատու և այլն։

«Լրաբերում» հրատարակված նյութերի մի զգալի մասը բաժին է ընկնում պատմագիտության հարցերին։ Այդ հարցերի մեջ կենտրոնական տեղ է գրավում պատմահեղափոխական թեմատիկան։ Լենինի կյանքն ու գործը, նրա պայքարը Ռուսաստանում նոր տիպի կուսակցության ստեղծման և սոցիա-

լիստական հեղափոխության հաղթանակի համար, Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը, հայ լենինյանների կյանքն ու գործունեությունը, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և հայ ժողովրդի ազատագրումը, հեղափոխական շարժումները և սովետական իշխանության համար մղված պայքարը Հայաստանում—ահա բոլորովին ոչ լրիվ թվարկումն այն պրոբլեմների, որոնք կազմել են նշված թեմատիկայի առանցքը։ Միաժամանակ նկատելի թիվ են կազմում այն հոդվածները, որոնցում հանգամանորեն բարձրացվել և լուսաբանվել են ՍՄԿԿ-ի և նրա մարտական ջոկատներից մեկի՝ Հայկոմկուսի պատմության հարցերը։

Հիմնադրման օրից սկսած՝ ամսագրի գլխավոր խնդիրներից մեկը եղել է սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման բնագավառում հայ ժողովրդի մասնակցության և նրա նվաճումների լուսաբանումը։ Տնտեսական, գաղափարական և մշակութային մարզերում մեր ժողովրդի ձեռք բերած աներևակայելի հաջողությունների գիտական համակողմանի բացահայտումը ամսագրում կատարվում է պատմագիտական, տնտեսագիտական, փիլիսոփայական և գիտության շատ ու շատ այլ բնագավառներին վերաբերող ուսումնասիրությունների հրապարակման միջոցով։ Այս առումով առավել զորեղ հասարակական հնչեղություն ունեն մանավանդ ընդհանրացնող հոդվածները, որոնցում ըստ կարևոր ժամանակահատվածների հանրագումարի են բերված սովետական տարիներին հայ ժողովրդի ապրած տնտեսական և կուլտուրական վերելքի արդյունքները։

Ամսագիրը, գաղափարական պայքարում իր դերի գիտակցումով, շարունակ անդրադարձել է ժողովուրդների ինտերնացիոնալ դաստիարակության հարցերին և բուրժուական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարի խնդիրներին։ Այդ հարցերի լուսաբանումը կատարվել է պատմական անցյալի իրողությունների քննարկման և սովետական տարիներին մեր երկրի ժողովուրդների միջև հաստատված եղբայրական դաշինքի սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմքի բացահայտման և ներկայացման հիման վրա։ Բուրժուական նացիոնալիզմի մերկացման նպատակին ուղղված հոդվածների մեջ, բնականաբար, զգալի քանակ են կազմում դաշնակցության նացիոնալիստական գաղափարախոսությունը մերկացնող նյութերը։ Առհասարակ բուրժուական գաղափարախոսության դեմ մարտական, հարձակողական պայքարի խնդիրները ամսագրում դրվում և լուծվում են պատմագիտական, փիլիսոփայական և տնտեսագիտական լայն ասպեկտներով։

Ինչպես և պետք էր սպասել, ամսագրում հրատարակված պատմագիտական հոդվածների, հաղորդումների, հրապարակումների և այլ կարգի նյութերի հիմնական ընդգրկումը հայ ժողովրդի բազմադարյան պատմությունն է՝ բոլոր ժամանակաշրջաններով և հիմնական պրոբլեմներով՝ սկսած հայ ժողովրդի ծագումից ընդհուպ մինչև զարգացած սոցիալիստական հասարակարգը։ Հայ ժողովրդի ծագման և կազմավորման, նրա պատմության պարբերացման, Հայաստանում ֆեոդալիզմի և կապիտալիզմի զարգացման առանձնահատկությունների, հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի և ազատագրական մտքի, հայ-ռուսական հարաբերությունների, Ռուսաստանի հետ միանալու պատմական նշանակության, հայկական գաղթավայրերի, պատմական առնչությունների, մշակույթի պատմության և այլ հարցեր ու սրանց

աղերսվող տասնյակ ու տասնյակ այլազան խնդիրներ կազմել են պատմագիտական հոդվածների էությունը, իսկ դրանց մի պատկառելի մասը նոր ու թարմ խոսք է բերել սովետահայ պատմագիտության բնագավառը, միաժամանակ հանդիսանալով լուրջ ներդրում գիտության այդ մարզում։

Պատմագիտության խնդիրներն արծարծող նյութերի մեջ ուրույն տեղ և հնչեղություն ունեն արևելագիտական հոդվածները։ Սակայն այս վերջինների շոշափած հարցերը դուրս են գալիս զուտ պատմագիտական շրջանակներից՝ ընդգրկելով նաև լեզվի, գրականության և մշակույթի հարցեր ամենահնագույն շրջանից մինչև նոր ժամանակները։ Այդ հոդվածները, մանավանդ Հայաստանին հարակից հին արևելքի ժողովուրդների լեզվին ու պատմությանը վերաբերող որոշ հոդվածներ, իրենց ընդգրկած նոր նյութերով և մեկնաբանություններով պիտի դասել արդի արևելագիտության աչքի ընկնող ձեռքբերումների շարքը։ Հիշատակության է արժանի նաև այն իրողությունը, որ իր տպագրած արևելագիտական նյութերով «Լրաբերը» («Տեղեկագիրը») մի զգալի չափով խթանել է արևելագիտական խնդիրների մշակմանը։

Նախապատերազմական տարիներից ի վեր և մանավանդ 50—70-ական թվականներին Սովետական Հայաստանում լայն ծավալ ընդունեցին հնագիտական աշխատանքները։ Դրանց արդյունքների մի զգալի մասը գիտական շրջանառության մեջ է դրվել «Լրաբերի» («Տեղեկագրի») էջերում։ Հնագիտական աշխատանքների արդյունքների մասին պարբերաբար ամփոփիչ հաշվետվություններ տպագրելու կողքին ամսագիրը շարունակ հրապարակել է գիտահետազոտական բնույթի ուսումնասիրություններ, որոնցում ըստ ամենայնի լուսաբանված են հայ ժողովրդի (և ոչ միայն հայ ժողովրդի) նյութական մշակույթի պատմության հարցերը։ Հնագիտական մի շարք նոր հայտնագործություններ առաջին անգամ հրապարակվել են «Լրաբերում»։ Ամսագիրը նույնչափ ուշադրություն է դարձրել բանահյուսական և ազգագրական նյութերի հրապարակմանը։ Հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգության այդ բնագավառների վերաբերյալ ամսագիրը չի սահմանափակվել սոսկ հայտնաբերված նյութերի մասին ինֆորմացիոն բնույթի տեղեկությունների հրապարակմամբ. սակավ չեն նաև գիտահետազոտական բնույթի հոդվածներն ու հաղորդումները, որոնցում արծարծվում են բանահյուսական և ազգագրական կարևոր պրոբլեմներ ու խնդիրներ։

Ունենալով մեծ ավանդույթներ և անցյալից ժառանգած բավական հարուստ փորձ, այդուհանդերձ հայ լեզվաբանությունն ու գրականագիտությունը ևս սովետական տարիներին զարգացման աննախընթաց վերելք ապրեցին։ Սովետահայ լեզվաբանների ձեռք բերած նվաճումները մշտապես կազմել են ամսագրի կողմից սիստեմատիկ կերպով հրապարակված նյութերի մշտական բաժինը։ Լեզվաբանական հոդվածների հիմնական թեմատիկան ժամանակակից հայոց լեզվի կատեգորիաներն են, նրա պատմությունը իր լայն ընդգրկումներով, լեզվաբանության տեսական խնդիրները, լեզվական առնչությունների և ազգակցության հարցերը։ Լեզվաբանական նյութերի շարքում որոշակի տեղ են գրավում հնդեվրոպաբանության հարցերը՝ մասնավորապես հայ ժողովրդի ծագման և հնդեվրոպական լեզվախմբում հայերենի զբաղեցրած տեղի ու խաղացած դերի հետ առնչված։ Ամսագրում զետեղված լեզվաբանական հոդվածներից մի քանիսն էլ ունեցել են կոնկրետ կիրառական նպատակ՝ օգնել ժամանակակից գրավոր և բանավոր խոսքի կանոնավորման և կարգա-

վորման գործին, և, բնականաբար, այդօրինակ հոդվածները դարձել են մասսայական ընթերցողի լայն ուշադրության առարկա։

Տպագրված գրականագիտական առատ նյութերը ներառում են գլխավորապես սովետահայ գրականության և հայ դասական գրականության զարգացման ուղիների, հայ գրողների ժառանգության, նրանց ստեղծագործության, գրականության պատմության և այլևայլ հարցերի լուսաբանումը։ Սովետահայ գրականագիտական մտքի ուշադրությանն արժանացած վիճահարույց մի շարք հարցեր առաջին անգամ քննության նյութ են դարձել «Տեղեկագրի» («Լրաբերի») էջերում։ Նկատելի թիվ են կազմում հայ հին և միջնադարյան գրականության առանձին ներկայացուցիչների գործերի վերհանմանն ու արժեքավորմանը նվիրված հոդվածները, որոնցից շատերի բարձրացրած հարցերն ու շոշափած նյութը նոր խոսք են մեր գրականագիտության մեջ։

Հասարակական գիտությունների զարգացման բնագավառում մեր հանրապետությունում իրենց որոշակի լուման են ներդրել փիլիսոփայական մտքի ներկայացուցիչները։ Դրա վկայությունն են նաև այն հոդվածները, որոնցով նրանք հանդես են եկել «Լրաբերի» («Տեղեկագրի») էջերում։ Այդ հոդվածների լուսաբանած նյութը ամենից առաջ մարքսիստական փիլիսոփայության՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հարցերն են։ Հրապարակված փիլիսոփայական բնույթի նյութերի զգալի բաժինը կազմում են հայ փիլիսոփայության պատմության և մասնավորապես անցյալի հայ փիլիսոփաների գործերին նվիրված հոդվածներն ու հաղորդումները։ Այս վերջինների նշանակությունը որոշակի է ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Միության մեջ փիլիսոփայության պատմության մշակման գործում։

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից սկսած՝ հանրապետությունում լուրջ ուսումնասիրության առարկա է դառնում հայ արվեստը՝ իր բազմադարյան պատմությամբ և բազմակի բնագավառներով։ Ամսագրի հիմնադրման օրից արվեստաբանական ուսումնասիրությունների հրապարակման գործը տարեցտարի լայն ծավալ է ընդունում։ Դրանց մի զգալի մասը նոր ու թարմ խոսք է հայ նկարչության, թատրոնի, երաժշտության, ճարտարապետության և այլ ասպարեզներում։ Արվեստաբանական հոդվածների գերակա մասը, բնականաբար, սովետահայ արվեստն է, նրա ձեռքբերումներն ու զարգացման ուղիները։

Ամսագրում, նրա հիմնադրման օրից առ այսօր, առանձնահատուկ տեղ է գրավում տնտեսագիտական թեմատիկան։ Եվ դա հասկանալի է. տնտեսագիտական հոդվածները կրում են ոչ միայն տեսական, այլև կոնկրետ կիրառական բնույթ։ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման և նրա առանձին բնագավառների ձեռք բերած նվաճումների ընդհանրացում, ճյուղային էկոնոմիկայի հրատապ խնդիրներ, տնտեսական առաջընթացին աղերսվող տեսական պրոբլեմներ—ընդհանուր բնորոշմամբ ահա այս խնդիրների շուրջն են իրենց մտքերը դրսևորում տնտեսագիտական հոդվածների հեղինակները, հիմնական կետ-նպատակ ունենալով բոլոր ուժերով օգնելու այն մեծ ջանքերին, որ գործադրում է Սովետական Հայաստանի աշխատավորությունը կոմունիստական շինարարության ասպարեզում։

Հոդվածներ տպագրելով հասարակական գիտությունների բոլոր բնագավառներից՝ ամսագրի խմբագրությունը, սակայն, հանդես չի եկել սոսկ դրանց

պասսիվ հրատարակչի դերում։ Հաճախ խմբագրությունը ակտիվ կերպով միջամտել և խթանել է այս կամ այն թեմատիկայի վերաբերյալ հոդվածների ստեղծումը՝ ելնելով տվյալ պրոբլեմի արդիական կարևորությունից։ Գիտական մտքերի աշխուժացմանն ու փոխանակմանն են ուղղված ամսագրի քննարկումներ, բանավեճեր, քննադատություն և մատենախոսություն բաժինները, որոնցում ներկայացված նյութերը սակավ դեր չեն խաղացել վիճահարույց այս կամ այն հարցի ոչ միայն բարձրացման, այլև հետագա մշակման, գիտական ճշմարտության ուղիների որոնման գործում։ Հասարակական գիտությունների զարգացմանը ուրույն ծառայությունն է մատուցում ամսագրի «Լրատու» բաժինը՝ գիտական կյանքի նորությունները ներկայացնելով ընթերցող հասարակայնությանը։

«Լրաբեր» ամսագիրն իր 40-ամյա հոբելյանը այսօր նշում է մեր հանրապետությունում հասարակական գիտություններին, մանավանդ հայագիտությանը մատուցած որոշակի վաստակով, այն ծանրակշիռ ներդրումներով, որ հանդիսացել են պարբերականում տպագրված հոդվածները գիտության այդ բնագավառներում։ Հուսով ենք, որ ամսագիրը այսուհետև ևս կգանվի իր պարտքի գիտակցման բարձրության վրա և անաչառորեն կշարունակի գիտության զարգացման շնորհակալ գործում իր ծառայությունները։ Այդ հույսի իրականացման վկան «Լրաբերի» անցած 40-ամյա բեղմնավոր ուղին է։

ЖУРНАЛУ «ЛРАБЕР» 40 ЛЕТ

ВАРДГЕС МИКАЕЛЯН

Резюме

В 1940 г. начал издаваться первый академический журнал в Армении— «Известия АН Арм. ССР» (с 1966 г.—«Лрабер асаракакан гитутюннери»). В первые годы издания журнал представлял и общественные, и естественные науки, а с 1943 г. стал выходить в двух сериях: общественные науки (серия I) и естественные науки (серия II).

40-летний путь, пройденный журналом,— это в значительной степени отражение достижений общественных наук в Советской Армении. В течение четырех десятилетий журнал принимал самое активное участие в разработке проблем общественных наук вообще и арменоведения, в частности. На страницах журнала публиковалось много новых исследований по истории, археологии, языкознанию, литературе и т. д., явившихся весомым вкладом в арменоведение. Журнал уделял и уделяет большое внимание освещению проблем истории советского общества, закономерностей социалистического строительства, достижений армянского народа в области экономики и культуры за годы Советской власти.